


ԱԵԼԻՏՍԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից, Ե., «Զանգակ-97» հրատ., 2009, 223 էջ:



2009 թ. լույս տեսավ Աելիտա Դոլուխանյանի ուսումնական նոր ձեռնարկը, որ կրում է «Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից» խորագիրը: Հրատարակության խմբագիրն է Բ.Գ.Պ. Անուշավան Զաքարյանը: Գործնականում սա շարունակությունն է այն ուսումնասիրությունների, որ XX դարի երկրորդ կեսին կատարեցին ակադեմիկոսներ Սերգեյ Սարինյանը, Հրանտ Թամրազյանը և պրոֆեսոր Ժենյա Քալանթարյանը: Ինքնին հասկանալի է, որ գիտության այս ճյուղը շարունակում է արագ զարգանալ, և մեր օրերում ևս ծագում են բազմաթիվ խնդիրներ, որոնք կարիք ունեն նոր լուսաբանումների: Սա նաև այն չընդհատվող գործընթացի շարունակությունն է, որ անվանում են գրելու արվեստ կամ գրողի վարպետություն և այն ուսումնասիրող գիտությունը՝ գրաքննադատություն, որոնք մշտապես արժարժվելու և նորոգվելու կարիք ունեն:

Ուսումնասիրության սկզբում Աելիտա Դոլուխանյանը բացատրում է, որ դասագրքի տպագրության կարևորությունը պայմանավորված է գիտաուսումնական հետևյալ խնդիրներով. «Հայ գրաքննադատության պատմություն» առարկայի ծրագրային թեմաների գերակշիռ մասը ներկայացնել առանձին գրքի ձևով, որին կցված է ուսանողների ընթերցելիք բնագրերի մի մասը ներկայացնող «Հավելված» (էջ 3): Դասագիրքն, այսպիսով, բաղկացած է երկու մասից՝ տեսական և գործնական: Առաջինում տրվում են համապատասխան տեղեկություններ այս կամ այն հեղինակի գրաքննադատական պատկերացումների մասին, իսկ երկրորդում՝ բնագրային հատվածներ այդ հեղինակների երկերից: Այդ եղանակն իրեն արդարացնում է դասընթացների անցկացման ընթացքում:

Անդրադարձ է կատարվում հայ գրաքննադատական մտքի պատմության երեք շրջաններին էլ՝ որոշակիորեն պահպանելով ժամանակագրական սկզբունքը: Քննությունն սկսելով V-VI դդ. հեղինակների գրաքննադատական տեսակետների ուսումնասիրությամբ՝ Դոլուխանյանը նրկայացնում է Մովսես Խորենացու, Հովհան Մանդակունու, Դավիթ Անհաղթի և Դավիթ Քերականի տեսակետները երկաստեղծման մասին: Դրանց շարքում կարևորում է «Պիտոյից գրքի» (հեղ.՝ Ափթոնիոս) արժեքը հայ կյանքում, որն Արիստոտելի «Պոետիկայի» և Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» երկերի հետ դառնում է գրաքննադատական մտքի սաղմնավորման հիմքը թե՛ Արևմուտքում, թե՛ մեզանում: Հայ հեղինակների նմանատիպ դիտարկումներն ավելի շատ «ցրված են հայ մատենագիրների փիլիսոփայական, պատմագիտական, ճարտասանական ու քերականագիտական գրքերում» (էջ 5):

Միջնադարյան

շրջանը

եզրափակվում

է Խաչատուր Էրզրումցու գրաքննադատական հայացքների ներկայացմամբ: Նրան համարելով առաջին գիտնականը մեզանում, որ առանձնացնում է գրականությունն ու գրականագիտությունը, ճարտասանությունը և լեզվաբանությունը, ունենում իր հետևորդները՝ հանձինս Մխիթար Մեբաստացու և Ստեփանոս Ազունցի: Էրզրումցու «Համառոտական իմաստասիրութիւն» (1711 թ.) երկը մեզանում դնում է կլասիցիստական գեղագիտության հիմքը: Սա նշանակում է, որ հայկական կլասիցիզմի ուսումնասիրությունը պետք է սկսել առնվազն XVIII դ. սկզբից:

XIX դ. գրաքննադատական միտքը գիտնականը կապում է Խ. Աբովյանի, Մ. Էմինի, Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի և Բաֆֆու անունների հետ՝ թերևս նկատի ունենալով երկու կարևոր հանգամանք.

ա) այս մեծությունները խորապես կապված են հայ միջնադարի հետ և քննարկում են հայագիտական խնդիրներ,

բ) սրանք գրապայքարի այն նշանավոր գործիչներն են, որոնք հասկանում են աշխարհաբարի կարևորությունը և էապես նպաստում նրա հաղթանակի ապահովմանը: Նրանք ապացուցում են լեզվական նոր ձևի տարածման ու ամրապնդման անհրաժեշտությունը հայ կյանքում:

Գ. Ախվերդյանի ջանքերով հրատարակված Մայթ-Նովայի հայերեն խաղերի լույս աշխարհ գալը, Ստ. Նազարյանցի հայագիտական ուսումնասիրությունները, Մ. Նալբանդյանի «Յաղագս հայկական մատենագրութեան» ճառը և հատկապես «Կրիտիկան», Բաֆֆու դրական վերաբերմունքը մեր դասական հնադարի նկատմամբ բարձրացնում են նրանց դերն ու նշանակությունը ոչ միայն որպես գիտնական-ստեղծագործողների, այլև որպես մեծ հայերի, հայրենասեր մարդկանց, որոնք անցյալի ավանդները վերականգնում ու օգտագործում են նորովի: Իսկ Խ. Աբովյանի կատարածը բոլոր առումներով բացառիկ է, քանզի նա կարևորում է և՛ լեզվի, և՛ ժողովրդական հերոսի, և՛ գրականության բովանդակության խնդիրները՝ այդ ամենին հաղորդելով բոլորովին նոր նշանակություն:

Չափազանց կարևոր է Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Արշ. Չոպանյանի և Պ. Սևակի գրաքննադատական հայացքների քննությունը: Դա եվրոպական և հայ մտքի մի յուրատեսակ համադրման «պատմություն» է, որ ունեցավ XX դ. հայ գրաքննադատական միտքը՝ շարունակելով թե՛ հնադարյան հունա-հռոմեական ավանդները միջնադարում, թե՛ XIX դ. եվրոպական և ռուսական մտքի ազդեցությունը: Հովհ. Թումանյանը մեզանում առաջինը հիմնում է գրական կազմակերպություն՝ «Վերնատուն» (1899 թ.) անունով, որը համախմբում է ժամանակի գրական ուժերը: Նրշվում են կազմակերպության գործունեության ուղղությունները՝ նախորդների ավանդույթների շարունակումը, դասական արժեքների վերագնահատումը, ժողովրդական բանավեպի օգտագործումը նոր ժամանակներում, և այլն: Անդրադարձ է կատարվում և Հովհ. Թումանյանի՝ Ռ. Դրամբյանին և դրամբյանականությանը տված գնահատականներին, վերջինիս գրաքննադատական անհիմն մոտեցումներին, երբ նա չգիտե, թե որտեղ է հեղինակը ընդօրինակող և որտեղ ստեղծագործող:

Վ. Տերյանի այն մտահոգությունը, որ նա հայտնում է համաշխարհային մեծերի երկերի թարգմանության առթիվ, այստեղ խիստ կարևորվում է: Բանաստեղծը ժամանակին զգուշացնում էր պատահական ստեղծագործություններ չթարգմանել, այլ դա կատարել հաշվենկատորեն և խելացի կերպով: Նրա «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը գիտնականը համարում է գրական մանիֆեստ: Մերձավոր անցյալի հեղինակների և ներկա ստեղծագործողների մասին խոսելիս Ա. Դոլուխանյանը կարծում է, որ Վ. Տերյանը բարձր է գնահատում Ալ. Շիրվանզադեի,

Հովհ. Թումանյանի և Ալ. Բասիակյանի դերը XX դարասկզբի գրականության մեջ:

Արշ. Չոպանյանի դերը առանձնացվում է հայ միջնադարյան հեղինակների թարգմանության ու տարածման առումով: Ըստ գիտնականի՝ Ա. Չոպանյանը վճռորոշ դերն ունի Գր. Նարեկացու՝ որպես համաշխարհային մեծության գնահատումներում: Վերջինս բանաստեղծին արժանավորապես համեմատում է Վերածննդի մեծերի հետ: Նա նաև պատվավոր տեղ է ապահովում Ֆրիկի, Քուչակի և Նադ. Հովնաթանի համար՝ թարգմանելով ու տարածելով նրանց երկերը ֆրանսերենով՝ հայտնի դարձնելով ամբողջ աշխարհով մեկ: Դա վերաբերում է մանավանդ Քուչակին վերագրված «Հայրեններու բուրաստանը» գրքին:

Ե. Չարենցի և Պ. Սևակի գրաքննադատական հայացքների ուսումնասիրությունը կատարվում է որպես հոգևոր ժառանգորդների գործունեության գնահատում: Ե. Չարենցի դեպքում գիտնականն անդրադառնում է բանաստեղծի 1934 թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ գրողների 1-ին համագումարում կարդացած ճառին և այն մի քանի բանաստեղծություններին, որ տեսական նշանակություն ունեն (օրինակ, «Թուղթ բանաստեղծ բարեկամիս NN-ին...» և այլն): Եվրոպական և ռուս սիմվոլիստների դպրոցն անցած Չարենցը նաև խոստովանում է, որ ինքը խոր ազդեցություն է կրել միջնադարյան հայ մեծերից՝ «հանճարեղ ճորտերից» (էջ 103): Խոսվում է նաև Վ. Շեքսպիրից, Հ. Հայնեից և Ալ. Պուշկինից կրած ազդեցությունների մասին, որոնց գումարվում է նաև Բ. Պաստերնակի, Ն. Տիխոնովի և Բ. Սելվինսկու բարձր արվեստի ազդեցությունը բանաստեղծի վրա:

Նորագույն շրջանի հայ գրականության մեջ չարենցյան ավանդույթները շարունակում է Պ. Սևակը: Գրականության մասին նրա տեսակետներն արտացոլվել են «Մարդը ափի մեջ» ժողովածուի առանձին քերթվածներում, իսկ հետո հատկապես «Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի» նշանավոր հոդվածում (1966 թ.): Բանաստեղծը ռեալիզմի նախահիմքերի մեկնաբանությունը բացատրում է ավելի հին ակունքներով, ավելի շատ ոգու ընտրությամբ, քան արտաքին ձևերի գերակայությամբ: Բանաստեղծի կարծիքով՝ «քվանտային ու հարաբերականության տեսությունների, ատոմային էներգիայի, տիեզերական հրթիռների ու արբանյակների դարում անհրաժեշտ է փոխել նաև բանաստեղծական արվեստի չափանիշները...» (էջ 123): XX դ. մարդու հոգում խորալներ են դողանջում, մինչդեռ նրան ուզում են հաճույք պատճառել ճաշարանային նվագախմբով: Մյուս կողմից, նորը հեշտությամբ չի ընդունվում: Մաշտոցին «տառագող», իսկ Տերյանին «ընդօրինակող» են համարել, սակայն իսկական արժեքը նոր, բայց և ճաշակավոր պետք է լինի: «Կան նույնիսկ գրողներ, որոնք տարակուսում են քննադատության անհրաժեշտության խնդրում», - նշում է բանաստեղծը: Բնքը բնավ նրանց կարծիքին չէ, որովհետև սիրով կարդում է նաև տարբեր քննադատների գործեր: Նա ուղղակի դժգոհ է այն բանից, որ ոմանք քննադատ լինելը նույնացնում են դիպլոմ-վկայագիր ունենալու հետ, մինչդեռ դա դժվարին կոչում է և ոչ թե ձեռքբերովի հատկանիշ (էջ 127-128):

Որոշ հետաքրքրական տեղեկություններ են տրվում գերիրապաշտական (սյուրռեալիզմի) դպրոցի՝ որպես նորագույն ուղղության մասին: Ֆրանսիայում նորագույն ուղղությունները ծագում են թերևս սիմվոլիստներ Արթուր Ռեմբոյից, Շարլ Բոդլերից: Հակասական մտքեր են երևան բերում XX դ. 20-ականի մեծ մտածողներն ու գեղագետները: Անատոլ Ֆրանսը հեզնում է հներին, որոնք իդեալականացնում են իրենց ժամանակներն ու գործերը: Մինչդեռ Լուի Արագոնը

«միտքը

գլխիվայր

շրջող

մեքենա» է անվանում գերհրապաշտությունը: Երկու աշխարհամարտերի արանքում բարձրացած այս ուղղությունը կենսունակ է նաև մեր օրերում և ունի իր երկու մանիֆեստները՝ գրված բանաստեղծ Անդրե Բրետոնի կողմից 1924 և 1930 թթ.: Ըստ Դոլուխանյանի, այն իր գաղափարական ակունքներով մեծապես կապված է ֆրեյդիզմի հետ: XX դ. 50-80-ականների նշանավոր դեմքերն են Ինգմար Բերգմանը, Սերգեյ Փարաջանովը և ուրիշներ, որոնք փայլեցին իրենց՝ համաշխարհային կինոարվեստի գանձարանը ներմուծած գլուխգործոցներով: Նորագույն ուղղությունները հաճախ ծայրահեղ մերժողական դիրք են գրավում անցյալի գրական մեծությունների հանդեպ, սակայն առանց նորարարությունների ևս հնարավոր չէ գրականության հետագա զարգացումը: Ինչպես տեսնում ենք՝ գրականության և գրաքննադատության ուղին հարթ ու միագիծ չէ. այն բարդ է և լի բազում անակնկալներով:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի սույն ուսումնական ձեռնարկը, լինելով հետաքրքիր մտահղացման արդյունք, ուսանողությանը կօգնի դյուրությամբ հաղթահարելու դասընթացի դժվարությունները: Սրանով հանդերձ, ըստ ՀՀ կրթության բարեփոխումների նոր պահանջների, բուհի ուսանողը ձեռքի տակ պիտի ունենա նաև տվյալ դասընթացին նվիրված ուսումնական ձեռնարկ, որի նպատակն է հնարավորինս հեշտացնել առարկայի յուրացումը: Անշուշտ, դասագիրքն օգտակար է նաև գիտնականների ու տեսարանների համար, որոնք մշտապես առնչվում են երկաստեղծման դժվարին խնդիրներին:

ՄԱԻԹԱԼՅԱՆ Ս. Մ.

Բանասիրական գիտությունների թեկնածու